ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, 091435136, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

12.03.2016թ.
271-ի 8

ՀՀ փոխվարչապետ, միջազգային տնտեսական
ինտեգրման և բարեփոխումների նախարար
պարոն Վաչե Գաբրիելյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Գաբրիելյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածներով և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Նշանակվե՞լ է արդյոք ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարությունում տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձ,
2. Եթե այո, ապա ո՞վ՝ անունը, ազգանունը, իր հետ կապի միջոցները,
3. Տեղադրվա՞ծ է արդյոք ՏԱ համար պատասխանատու պաշտոնյատար անձի մասին տեղեկատվությունը ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարության կայքում (եթե այո, ապա խնդրում եմ նշել հիպերհղումը),
4. Խնդրում եմ տրամադրել այն իրավական ակտի պատճենը, որով նշանակվել է ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ ադմինիստրատոր Անժելա Նորիկյան